

- 350(744). Օխտը չափի,  
Մշետ կտրի:
- 351(745). Օչեն նուժնը,  
Կոտրած կուժը:  
(Այսինքն՝ հրամարվել որևէ  
անհմաստ ու անօգուտ բանից):
- 352(746). Օրե՛՛ զարք,  
Տարե՞ն՝ մըխկիտ:
- 353(747). Օրը՝ քյացած,  
Խաթե՞ն՝ մնացած:
- 354(748). Օրն օրին հետ յոլա կըյնա  
(Այսինքն՝ օրերն անցնում են  
միանման):
- 355(749). Օցը տքցնողին ա կծըն:
- 356(750). Օցի կյլուխը որ ցավը ա,  
Եանքեն ա տուս կյալի:
- 357(751). Օցի վլու թքի, օցը կսատկի:
- 358(752). Օցի թիստը լավլազը կմարսի:  
(Այսինքն՝ ղմվարությունը նաս-  
նագնուղ կատրահարի):
- ԴԱՐՁՎԱԾՆԵՐ**
- 1(753). Արդպյուլ մի անի:  
(Գլխառադ չանել,  
անուշադրության չմատնել):
- 2(754). Աժուղի կյալ:  
(Գլխի ընկնել, ջոկել):
- 3(755). Ականջը կանչի:  
(Այսպես են ասում, երբ  
ցանկանում են, որ հեռվում  
գտնվող ինչ-որ մեկը հասու  
դառնա, տեղոյակ լինի տան  
անցուդարձին):
- 4(756). Ականջը կտրել:
- 5(757). Ալին-կրակին անել<sup>1</sup>:  
(Գործը արագացնել, շտապ անել):
- 6(758). Ամեն մարթ դիմացին իրա արշի-  
նով ա չափօր:  
(Յուրաքանչյուրը դիմացին մեջ  
տեսնում է այն, ինչ ինքը ունի,  
կամ ինքը ցանկանում է):
- 7(759). Անկգակը քցել:  
(Հարմարեցնել):
- 8(760). Անձիլ- անձիլ ըլիլ:  
(Ծվեն-ծվեն լինել):
- 9(761). Աչքը ուտել (Անկըս ուտըմ չի):  
(Համարձակւորունք չի  
բավականացնում):
- 10(762). Աչքներովն ընգնել:  
(Կերաբերմունք ցույց տալ):
- 11(763). Աստծու էրեսից ընգածք:  
(Աստծուց մերժմած, վատ,  
արգահատելի  
անձնավորություն):
- 12(764). Աստծու վեշը փոնել:  
(Ցույն աստծու վրա դնել):
- 13(765). Աստծուն տրժար լյլական պան  
ասել:  
(Այնպիսի միտք արտահայտել,  
որ նույնիսկ աստված չի  
ընդունի, արգելված միտք,  
խոսը):
- 14(766). Աստղի հետ խաղ ա անըմ:  
(Գեղեցիկ է):

<sup>1</sup> Բառացի նշանակում է օջախի, ակի (ակն) կրակը  
բրոբրեն, որ օջախի վլայի ուտելիքը արագ եփվի  
(ծանոք, բանհափառի):

- 15(767).** Աստամն ատամին առնել:  
 (Լուել, ինչ-որ հանգամանքներում  
 հանգստություն հանդես բերել):
- 16(768).** Աստամները հաշվել:  
 (Թույլ տեղն իմանալ և առիթից  
 օգտվել):
- 17(769).** Արանքը ճողել:  
 (Ինչ-որ բանից խույս տալ, ինչ-որ  
 բան հաջողացնել):
- 18(770).** Ծրջամ-փառջամ  
 (Ավում է մտամոլոր, ցրված  
 աղջկեմերիմ):
- 19(771).** Բազի վախտ  
 (Ինչ-որ պահի, ինչ-որ ժամանակ,  
 երեսն):
- 20(772).** Բալի պարին ես ա (Գուցե բարին  
 եւ ա):
- 21(773).** Բամբակ ես վարը<sup>1</sup>։  
 (Անօգուտ գործ անել):
- 22(774).** Բըբարափ անել:  
 (Վիժել, ոչնչացնել):
- 23(775).** Գելը փորն ա քցել:  
 (Խմել է, և ախորժակը բացվել է):
- 24(776).** Գյլիզ իմ հոր ոսկի պահը ըստի  
 կոտրել ա<sup>2</sup>:
- 25(777).** Գյլուը<sup>1</sup> լիզել:  
 (Տաճ ունեցած ուտելիթի կամ  
 եղած-չեղածի վերջը տալ, մնալ  
 առանց հանրապիությունների):
- 26(778).** Դամարը մտնել:
- (Թույլ տեղը գտնել, ամեն ինչ  
 իմանալ, համգել կամ ինչ-որ  
 բան անել տալ):
- 27(779).** Դավի-դառաքա դառնալ:  
 (Քաշջուկ, կոփվ.  
 վիճաբանություն)
- 28(780).** Ոն են ա ասա կելը մըտկմըտ  
 տրոել ա:  
 (Մտքում ինչ-որ բան կա):
- 29(781).** Դիբ-դիբ ըլել:  
 (Դակարովել):
- 30(782).** Դիր ու թեշ անել:  
 (Դեգնական իմաստով ասվում է  
 այն մարդու մասին, ով իբր-թե  
 ինչ-որ բան է անում):
- 31(783).** Դիր ա ասել ու պրօել (Դիր ա  
 ասել՝ կաղնել):  
 (Իր ասածից շիրաժարվել,  
 համառել):
- 32(784).** Եղանակը թլուր ա:  
 (Մայլ, ամպամձ եղանակ է):
- 33(785).** Եղանակը թլուր ա,  
 Զանգը կոխել ա:
- 34(786).** Եսիր ըլել:
- 35(787).** Զիենը ցույց տալ (Զիենը շիանց  
 տալ<sup>2</sup>):
- 36(788).** Էջը ցեխից հանել:  
 (Սի դժվար գործ մի կերպ անել):
- 37(789).** Ես դոլ, են դոլ ամել:  
 (Վերաբերմունք ցույց տալ):

<sup>1</sup> Գյլու - Փայտից պատրաստված երկարավուն,  
 բավկանից խոր մի հարմարանք՝ անաստեներին  
 շնելու համար (Ժամոթ. բանահավաքի):

<sup>2</sup> Եթե որևէ մնելու իրեն վատ էր պահում կամ ան-  
 հարկից խոր կամ գործ էր անում, նրան իր տեղն  
 են ցույց տալիս: Այսինքն՝ ուժը, զորությունը, զեն-  
 քը ցույց տալ:

- 38(790).** Ես դու, են դու ընգնել:  
(Դեսուդեն ընկնել):
- 39(791).** Ետ ես պիւրք վարիլ տալի հա՞:
- 40(792).** Ետ ո՞ւմ գլխարկը դի քըցնիլ<sup>1</sup>:
- 41(793).** Երկու ոտ էլ փոխ առնել:  
(Մի բանի համար շատ արագ  
գնալ):
- 42(794).** Ըստիս տալ:  
(Ինչ-որ մեկի ուշադրությունը  
շենել կամ դժուարիրավ ինչ-որ  
մեկի ճանկը գցել):
- 43(795).** Ըոյի կիսին քաշել:  
(Մեկին իր տեղը ցուց տալ,  
սաստել):
- 44(796).** Թախտօր ավալ կենա:  
(Թախտոյ շեն կենա):
- 45(797).** Թաթրափն ընգնել:  
(Ազդեցության տակ ընկնել,  
ճանկն ընկնել):
- 46(798).** Թափ ու թեշտ անել:  
(Որևէ մեկի տունը, ունեցվածքը  
վաստել, ցրիվ տալ, թալանել):
- 47(799).** Թոփեր քցել:  
(Մեկի հասցեին անվայելուչ  
բաներ անել, ըննադատել կամ  
մեղադրել):
- 48(800).** Թոփք ցամաքել:  
(Սասակի վախենալ ու զարմանալ,  
վախախան զարմանք):
- 49(801).** Ինձ ծովին բեռնեց:  
(Աղքատացնել):
- 50(802).** Ինչ-որ մեկի ջրեխը տալ:  
(Անմեղին ցեղել  
պատասխանատվության տակ):
- 51(803).** Իշի զատկին  
(Այսինքն՝ էշը զատիկ չըւնի, և այդ  
օրը երեք չի գա):
- 52(804).** Իշով աշուղ քյանլ<sup>2</sup>:  
(Այս արտահայտությունն  
օգտագործվում է այն մարդու  
նկատմամբ, ով գնում է ինչ-որ  
տեղ և ուշ է վերադառնում):
- 53(805).** Իրան տուր տասնչորս շահին<sup>3</sup>:
- 54(806).** Իրար պեռնըն թքած են:  
(Գործում են  
փոխհամաձայնությանք):
- 55(807).** Լիզվիտ տակին պան կա:  
(Ոս ասվում է այն դեպքում, եթե  
խսակիցը դիմացինց ինչ-որ  
բան է քաքցնում, բայց այնպես, որ  
նա հասկանա խոսքի թերի,  
պակասավոր լինելը):
- 56(808).** Լոր տամ Գյուղայս անել<sup>4</sup>:

<sup>2</sup> Վար ժամանակներում, երբ աշուղները շրջազայրացն էին դուրս գախս, հնարավորության դեպքում էշը էշը կեն գնում և իրեն աշխատած բարուն էին շեն և համակա շրջում պուդից պուդ ու շին շտապում տուն վերադառնալ: Այսինքն՝ էշը շրջազայր աշուղները երկար ժամանակ տուն շին վերադառնում (ծանոթ, բանակապի):

<sup>3</sup> Այս արտահայտությունն օգտագործում են Թիֆլիսի հայերը: Այս դարձվան ասուն են, երբ մեկն իր գոհուանակությունն է հայտնուած որևէ բանի առիրու: Էամագոր է ուսուական «քառ ճա» կամ «ըսին լըշի» (ըսին մտիկ արա» արտահայտություններին (ծանոթ, բանասացի):

<sup>4</sup> Այս դարձվան օգտագործում են իջևանցիները: Վար ժամանակ իջևանում մի հարքահասակ մարդ է եղել, անուն՝ Գյուղայս (Վիրալամ), Գյուղայսը քընը և շրպիդի հմար հաց ու տանըն, վորազըն ա, լոր-լոր տալով ա թյօթ, բանեց էլ մնացել ա, «Լոր տամ Գյուղայս անել» դարձված (ծանոթ, բանասացի):

<sup>1</sup> Գլխարկը բոցնել - այսինքն՝ որևէ նշանակալից քան անել կամ որևէ անսպասելի քան անել:

(Այսինքն՝ մի գործ շտապ և  
վրայով ցատկելով՝ լոր տալով,  
գլւառադ անելով կատարել):

57(809). Խաղը պրօպել ա:

(Սի բան արդեն ավարտին է  
մոտեցել):

58(810). Խանի խազնին նստել<sup>1</sup>:

59(811). Խելքը հացի հետ ուտել:  
(Այսինքն՝ միամիտի մեկն է):

60(812). Խելքը չափել:  
(Մեկին հիմարի տեղ դնել):

61(813). Խելքը վարել (Խելքը վարո՞մ չի):  
(Այսինքն՝ մի բան հասկանալ,  
խելքը կտրել կամ չկտրել  
(երկրորդ տարթերակ) :

62(814). Խելքի ծըրենա:  
(Խելքի պատճառով, օրինակ՝  
խելքի ծըրենա կրակն ա ընգել):

63(815). Խոնջանախեղո անել:  
(Այսինքն՝ կինց աճուսուն կամ  
տղամարդուն ստիպւմ է ինչ-որ  
բան անել ի հաշիվ սեքսի):

64(816). Խորը քուն մտնել:  
(Այսինքն՝ մեռնել):

65(817). Ծալը պակաս:  
(ԱՄիսելք):

66(818). Ծալքու քերել:  
(Ուշացնել):

67(819). Ծանգով նմայնել:  
(Զայնախափ լինել):

68(820). Ծերատար ըլած<sup>2</sup>:

69(821). Ծըթերըս վրա ա անըմ:  
(Այսինքն՝ արվոյ գործը  
ցանկալի է ու կատարողի  
ուժերին հաճապատասխան):

70(822). Ծըթերս վրա չի անըմ<sup>3</sup>:  
(Այսինքն՝ անելու ցանկություն  
չկա, վստահ չի, կամ էլ ինչ-որ  
բառ սրտով չի):

71(823). Ծըրտօղող ըլնել (Ծըրտօղող  
անել):  
(Վառ լողանալ կամ վատ լվանալ,  
կեղտոտ մնալ կամ կեղտոտ  
թողնել):

72(824). Կալմեց անել:  
(Ինչ-որ մեկին չորս կողմից  
շրջապատել, շրջանի մեջ առնել):

73(825). Կավից տուս կյալ:  
(Զանց թափել՝ անհարինն  
աննլու):

74(826). Կատարը<sup>4</sup> սրել:  
(Ինչ-որ բանի սպասելիք  
ունենալ):

75(827). Կեռ տայ:  
(Սի բանից խուսափել, խաբել,  
օրինակ, «Սինը մնու կեռ են  
տայի»):

<sup>2</sup> Ասվում է այն մարդու մասին, որն անհանգիստ քնավորության է և առավոտյան շուտ է վեր կիսում և ինչ-որ բանով զրավում: Նաև նշանակում է քնահարած լինել:

<sup>3</sup> Կարք կրելիս, որպեսզի կարի հոսքը առատ լինի՝ կրվող անասունի կամ երեխային կերակրում մոր կուրծքը լվանում և մերսում են, որ ապաստն կարի առատ հոսքին, որ կրցվում «կարք վրա անել»: Վերոհիշյալ դարձվածի մեջ առաջնային է դատնում կարի առատությունը չապահովելու ցանկությունը (ծանոր, բանահավաքի):

<sup>4</sup> Կատար - այստեղ օգտագործվել է գլուխ իմաստը: Եթե արագածի ուշադրությունը ինչ-որ բան գրավիւմ է, նա գլուխ տմնիւմ է՝ «կատարը պրում է», իշլամում «կատարը սրել ա» ասում են այն աշղիկներին, ովքեր փորձում են գրավել տղա- նիի ուշադրությունը (ծանոր, բանահավաքի):

<sup>1</sup> Այսինքն՝ շատ հարստանա: Օգտագործվում է նաև հեգնական ինաստով, եթե ցանկանում են ընդգծել, որ հարսուս չեն. «Դեյքի թ խանի խազ- նին նստել են» (ծանոր, է. խեմշյանի):

**76(828).** Կըոմերը թիւանալ  
(Դուսահատվել)

**77(829).** Կծի քուիս տալ:  
(Վաս համը քողարկելու համար  
ուտելիքին կծու տաքեղ  
ավելացնել):

**78(830).** Կյուիսը յեղել (յուղել):  
(Մեկին խարել, մոլորության մեջ  
գցել):

**79(831).** Կյուիսը կապել<sup>1</sup>:

**80(832).** Կոճի՞՞ ալչու ընգամ:  
(Որդը հաջողվեց):

**81(833).** Կուչ եկած գըրագի օրը<sup>3</sup>  
(Կիրակին կուչ եկած չի կարող  
լինել, այսինքն՝ այդ օրը երբեք  
չի գա):

**82(834).** Դանդիշկու դիրավ:  
(Այսինքն՝ մահը եկավ քեզ  
համար):

**83(835).** Դարսի փեշը կտրել:  
(Որևէ աղօկա աչք դնել, որ  
նշանեն):

<sup>1</sup> Իշևանում այս դարձվածքը այլաբանորեն նշանակում է Նախասես ինչ-որ բան պանակրեց: Օրինակ, եթե խոսք է գմում ստանավիշ դրամի մասին և նախապես որոշվում է, թե այն ինչի վրա պետք է ծախսվի, ասում են՝ «Կյուիսը կապել», կամ խոսակիցներից մեկն առաջարկում է «Կյուիսը կապի», այդինքն՝ ինրդ քեզ որոշի, թե ինչպիս պետք է ծախսն դրամը (Ժանրը բանահավաքի):

<sup>2</sup> Կոճի – ոչխարի ուղի ուսկրոներից մեկն է (Ժանր, բանասացի):

<sup>3</sup> Այս արտահայտությունը Դիուավան գյուղում ասում են, եթե որևէ մեկը ցանկանում է հսկացնել, որ իր խոստումը չի կասարելու կամ ասածը անիրազործելի մի բան է: Այս և «իշի զատիկ» արտահայտությունները օգտագործում են հատկապես երեխաներին ինչ-որ բան խոստանախ, և մասմիտ երեխան սպասում է, թե երբ է զալու «իշի զատիկը» կամ «կուչ եկած գըրագին» (Ժանր, բանահավաքի):

**84(836).** Դորիշ անել<sup>4</sup>:  
(Օգնել):

**85(837).** Դուն ըլա (հուն ըլել):  
(Դժվար կացությունից դուրս  
գալ):

**86(838).** Դանդուր անօմ ա (դանդուր անել):  
(Պահ տալ, կրկին անգամ  
հավատացնել):

**87(839).** Դառաղուռն պատել ա:  
(Այսինքն՝ բազում ցավեր են  
պատեն):

**88(840).** Դարաղած դառնալ:  
(Շատ չորանալ):

**89(841).** Դըմեկոթած անց կենալ (դժկորել):  
(Զայրացած և սրընթաց գնալ):

**90(842).** Դըրսամբա ա եկել:  
(Այսինքն՝ ցուրտը կոնել է:  
Բանասացի երկրորդ բացա-  
տրությունը՝ ջուրը կտրել է):

**91(843).** Դըրսամբեն կապել ա ջաներնին:  
(Այսինքն՝ ցուրտը վրա է տվել):

**92(844).** Դիմը<sup>5</sup> քաշվել:  
(Այսինքն՝ պատյանի մեջ է  
քաշվել):

**93(845).** Որչինը մտած:  
(Ժլատ):

**94(846).** Դուդը վեր կապել<sup>6</sup>:  
(Զայնը կտրել):

<sup>4</sup> Եթե վարելու ժամանակ գութանին լժված եղը հոգմում էր, մի ուժեւ և հանգստացած եղ էին ծով բուլացածի հետ, հորիշ էին անում, որ իրար օգնելով լուծ բաշեն (Ժանր, բանահավաքի):

<sup>5</sup> Դիմը – պատյան, ասվում է ճարոր մասին, իսկ դուրսությունը թիվ պատյանն է (Ժանր, բանասացի):

<sup>6</sup> Ըստ բանասացի՝ սա իշևանցիների (Բարվանսա-  
րա) սիրած արտահայտությունն է:

- 95(847).** Դուրդ ե՞մ:  
(Բկլիկ ե՞մ):
- 96(848).** Դուրդ չեմ հու<sup>1</sup>:
- 97(849).** ճըմբան ծերին մնալ:  
(Այսինքն՝ զրկվել ամեն ինչից):
- 98(850).** ճըտի (Շուտ) ճըռաման  
(Այսինքն՝ շատ փոքր,  
փոքրամարդին)
- 99(851).** ճըրի իրեսին քննալ:  
(Ծայրահեղ աշքատ լինել):
- 100(852).** Մաշուրից ընկնել:  
(Չնշարվել, տեսրից ընկնել):
- 101(853).** Մասրեյին անել:  
(Ծակձկել, տեղաշարժ անել,  
ստիպել ինչ-որ բան անել):
- 102(854).** Մեջ ուստող, դրադ ման էկոլ:  
(Այսինքն՝ ուստեղու ժամանակ  
ներկա է, իսկ աշխատանքից  
խուսափում է):
- 103(855).** Մի աղքի ծակ է լու կփակի<sup>2</sup>:  
(Ասվում է թիջ կամ ոչ այնքան  
լավ ուսելիքի մասին):
- 104(856).** Մի ոտն աղաք:  
(Աճապարել, ժամանակից շուտ  
կամ բոլորից առաջ ինչ-որ բան  
անել)

**105(857).** Սինչև եղավ, օցերը ծնեցին:  
(Այսինքն՝ անհնարին գործ  
կատարել):

**106(858).** Մինչև հանգ-հունգ արի,  
Օցերը ծնեցին<sup>3</sup>:

**107(859).** Միսը ատամով կծել:  
(Ցագիվ զսպել իրել):

**108(860).** Մնին մի կծած կորեկ չի տա:  
(Չափազանց ժլատ է):

**109(861).** Առկսը բոշանալ  
(Չայրուսը նատել, հույսը կտրել)

**110(862).** Մուշտարի տաքացնել:  
(Մեկին հրապուրել կամ համոզել  
որևէ բան անել):

**111(863).** Ծաբիցի հետ բարօշըմ չի:  
(Անհաշտ է):

**112(864).** Ծամ թիջ ճուր խմել:  
(Ասվում է որևէ գործի  
առնչությամբ, եթե անելիքը  
դժվար է կամ անհնար և արվում  
է գերագույն լարումով):

**113(865).** Ծատ չի դողոյ անես:  
(Ուտելիքը կամ ինչ-որ մի բան  
անշնորհը չլցնել, չափից դուրս  
շատ չլցնել):

**114(866).** Ծատ օցի կծածն ա:  
(Ասվում է այն մարդաբան մասին,  
ովքեր չար ու նենգ են, օճաքարո  
վարքագիծ ունեն):

**115(867).** Ծարարով կըլիչ քրցել:  
(Չեռքով-ոտքով, նշաններով  
հասկացնել):

**116(868).** Ծեպած անց կենալ:

<sup>1</sup> «Ասվում է այն դեպքում, եթե ատիպություն ունի առաջանակ շատ ուստեղ, այսինքն ըրիսներ չի, մարդը չափավոր ուստող է, շատավեր չէ (ծանոթ, բանասացի):

<sup>2</sup> Մինչեւ մեր կեղացիք սարսն ուրուն անիլս են ըլը: Օրյ որ ճաշ ա տառնըն ու չորն էլ զոր ա անքն, եռ են տառնըն, որ մի թիջ համ դիմջանան, համ է հաս ուստեղ: Մըրքարան Ավետիքը մի թեփ- չի մասուն ա փրզըն, որ ուսի, մըն էլ որդիան որդի մի եքա մորեխ կյալսիս ա ընգնըն Ավետիքի մածնի մըք: Ավետիքը քրալու քաջան ա ու մասն հետ խառնըն, կրոջի նստածնն ասքը են:- Ակա Ավետիք, մորեխը համի, մորեխը համի:

- Ոչինչ, մի աղքի ծակ էլ տս կփակի,- ասքը ա Ավետիքը ու մորեխախառը մածունը առաջ քաշը:

(Զայրացած և սրբնեաց գմալ):

117(869). Ծվաքի հետ պտիտ ա կյալի:

118(870). Ողից-կըլիսից ընգնել:  
(Չափից դուրս խմած լինել,  
հարթել):

119(871). Ոռն էրեսից կապած:  
(Աներես, անամոր ճարդ)

120(872). Ոռովը կետ ա քյոզմ:  
(Չափազանց հարուստ է):

121(873). Ոտը դեմ տալ:  
(Ինչ-որ բան մինչև վերջ պնդել):

122(874). Ոտը դաշաղի ա<sup>1</sup> (Ոտը՝  
դաշաղի):  
(Այսինքն՝ հասպես գմալ և ետ  
վերադառնալ):

123(875). Ոտները թիւանալ  
(Վախտնալ):

124(876). Ոտքին հինա դնել:  
(Ուշ-ուշ գմալ):

125(877). Չալ թել հըլորել:  
(Վատարանել):

126(878). Չոր յեղած (յուղել) կամ  
կըջպանց:  
(Այսինքն՝ պինդ, ժլատ,  
չորքօքժիպ ճարդ):

127(879). Չոր փետոց արին թել:  
(Չուր տեղը անմեղին  
ամբաստանել):

128(880). Չորքօքժիպ<sup>2</sup>:

129(881). Չոփ քցել:  
(Վիճակ գցել):

130(882). Չոփը վրեն ա ընգել:  
(Վիճակը ինչ-որ մեկին բաժին է  
հասել):

131(883). Չվանաքաք քյնալ:  
(Գործը երկարացնել):

132(884). Չուխեն հենց քցըն ա, որ ինքը  
տնելավորվի:  
(Ոչ մեկին տեղ չսուլ, ինչ-որ բան  
իրենվ անել):

133(885). Չուխեն փոել<sup>3</sup>:  
(Յիմնավորվել, մի տեղ չափից  
ավելի մնալ):

134(886). Չուխեն քցել:

135(887). Պան չի կըլալը:  
(Չի հասկանում, գլխի չի  
ընկնում, ասում են  
անհասկացողին):

136(888). Պառավը ծոցն անել<sup>4</sup>:

137(889). Պատը ծեղ կոխել:

որից որևէ բան կորցելը համարժեք է դժվար ար-  
տարրորածին (ձանոր, քանասացի):

<sup>3</sup> «Ե հու քյնալ չի դոնաղատամը չուխեն փոի»  
(ծանոր, քանասացի):

<sup>4</sup> Վաղ մամանաներում Խցւանում և Խցւանի

շրջանի գրուերում երեկոյան անկողին մտնելուց

և առաջտան վեր կենապուր առաջ երեսաների  
համար մի յուրօնինակ մոցոյց էին կազմանիբ-  
ումն, թե ով առաջին կամավակ կամ կիազմի:

Խայի մասնակիցներից նա, ով մոցուրում պար-  
տվող կողմն էր լինեմ, նրան ծեղը էին առնում և  
ասում. «Պառավը Սամելի ծոցը», կամ «Պառավը  
Սարոյի ծոցը». Դա պարտվողի հաճար անսատ-  
վուրուն էր, որդիխեն, ըստ ավանդույթի, ցանկա-  
լի էր, որ երիտասարդի կամ պատանու հետ թեն ոչ ոչ  
առարկայական, այլ երևակայական, անկողին  
մտնել երիտասարդ ով գեղեցիկ առջիկ և ոչ ոչ  
պատասխան:

Պառավ բարի տակ համացվում էր և  
ծեր կիմ, և ծեր տղամարդ, նայած խայի  
մասնակից (պարտվողը) որ սերի ներկայացուցիչ  
է (ծանոր, քանասացի):

<sup>1</sup> Ղաջաղ- ավազակ: Ավազակը միշտ փախուստի  
մեջ և չ չառապում է ճորոպակ: Այդ խմաճամբըքը  
իինք է ծանակ վերոիիշյալ դարձվածի հաճար  
(ծանոր, քանասացի):

<sup>2</sup> Բառացի նշանակում է՝ «Քաքըն ա, հաճա պինդ  
ա վեր ածքը»: Այլբարանորեն նշանակում է՝ ժլատ,

- (Ասվում է այն դեպքում, երբ որևէ մենք մի որևէ ահնարին,  
չսպասված քան է անում, կամ  
վերջապես անում է այն, ինչ  
ափտը է վաղուց աներ):
- 138(890). Պարապ հացակեր**  
(Անօգուտ անձ)
- 139(891). Պեռնի կյուլ գիրենալ:**  
(Մտադրությունների մասին  
ինանալ):
- 140(892). Պերանըմբ տար ճուր չպահել:**  
(Քերանքաց, գաղտնիք չպահող  
մարոյ)
- 141(893). Պոժոժ անել<sup>1</sup>:**
- 142(894). Պոչը կտրել, խառնվել**  
ջահելներին:  
(Ասվում է այն մարդկանց մասին,  
ովքեր անհարի փորձում են  
տարիշից երիտասարդ երևալ):
- 143(895). Պոչը պոկել:**  
(Ինչ-որ մենքին աշխատանքից  
ազատել):
- 144(896). Պոչի մազը վեր գալ (Պոչի մազը  
վեր ա գալի):**  
(Ինչ-որ քան շատ ցանկանալ և  
ցանկությունը ոչ թե ուղարկի,  
այլ կողմնակի կերպով  
հասկացնել):
- 145(897). Պորտը տեղը դմել (Պորտը տեղը  
քցնել):**  
(Որևէ մենքին իր տեղը ցույց  
տալ):
- 146(898). Ոիմը շհանց տալ:**
- 147(899). Սատանեն վերն նստել ա:**  
(Սուս են այն դեպքում, երբ ինչ-  
որ քան կորել է և չի գտնվում):
- 148(900). Սատանի ականջը խուլ:**  
(Ասվում է այն դեպքում, երբ չեն  
ցանկանում իրենց ասածը կամ  
արածը հայտնի դառնա և վաս  
քան պատահի):
- 149(901). Սարփա չի (ռազի չի):**  
(Այսինքն՝ թե եթև համաձայն  
չի, համամիտ չի):
- 150(902). Սըհանք սարբին նիենց չեն քցի,**  
Որ պոպոքը կենա վեր ընճմի:  
(Այսինքն՝ նշանառությունն  
այնպիսին է, որ արդյունքը  
կրկնակի լինի):
- 151(903). Սըմասկի ըռեկը տալ:**
- 152(904). Սիաթ անց կացավ:**  
(Այսինքն՝ մահց եկավ կողքով  
անց կացավ):
- 153(905). Սովն ու սախտը տարել ա:**  
(Սովամահ է եղել):
- 154(906). Վե քաշվել:**  
(Զարմանալ):
- 155(907). Տախտակը պակաս:**
- 156(908). Տանակը սոկորին ա հասել:**  
(Համբերությունը սպառվել է):
- 157(909). Տառը մըխտեման<sup>2</sup>:**  
(Սարսափելի դառը)

<sup>1</sup> Իջևանի բարբառում բռժոժ (պոժոժ, պոժ) ան-  
վանում են կամիր կօտ տարբեին: Այս արտա-  
հայտությունն օգտագործվում է այն ճարոր մասին, ով հանդիսում է ընդիմանալ և կօտ խո-  
քեր անձ իրենց ասաց, հարգարժան և հեղինա-  
կություն ունեցող անձին (ծանոթ. է. Խենցյանի):

<sup>2</sup> Մըխտեմանը ըստ Դայկ Խենցյանի բացարու-  
թյան նշանակում է մահտարմած, որը նշանա-  
կում է համաճարակ (ծանոթ. բանհավաքի):

**158(910).Տեղփոխ տալ:**

(Տեղից-տեղ տեղափոխվել,  
ասվում է նաև  
փոփոխամտության դեպքում):

**159(911).Ցերը կաթել:**

(Ինչ-որ բան շատ ցանկանալ,  
ուստիշիք համար ուշքը գնաւ,  
օրինակ՝ «Արադի հրամա ցերը  
կաթեմ այ»):

**160(912).Ուրիւր- տուրիւր անել:**

(Մի կերպ միացնել):

**161(913).Փախիրը<sup>1</sup> բաց անել:**

(Որևէ մեկի վաս արարքը  
բացահայտել):

**162(914).Փորը մեզիցը կպած**

(Նշանակում է շատ նիհար):

**163(915).Փորը վե չի ունըն (Փորը վե չի  
ունիլ):**

(Պատիվը թույլ չի տալիս):

**164(916).Փորը տափերը քսել:**

(Անուղղակի ճանապարհով իր  
ցանկությունը հասկացնել):

**165(917).Փորի հետ խոսող մարդ:**

(Գոռող)

**166(918).Փորի հետ մասլահար անել  
(անող):**

(Ինըն իր հետ խորհուրդ անող,  
ուղիղին չվստահող, գոռող  
մարդ):

**167(919).Փորներն արյուն կտրած**

**168(920).Փուշը թողնել:**

(Դիասթափվել):

**169(921).Քամակը քեել:**

(Այլարանորեն՝ սաստիկ  
վախենալ, ինչ-որ մեկից բաշվել,  
բառացի՝ փորը բռյլ լինելուց  
լուծել):

**170(922).Քարը ծովն ընգամ:**

**171(923).Քարը մտնել<sup>2</sup>:**

**172(924).Քարը փեշիցը վեր ածել (Քարը  
փեշիցը վեր ածա, կամ՝ Արի՝  
քարը փեշիցը վեր ածա):**  
(Դակառակությունը  
դադարեցնել և համաձայնության  
գալ):

**173(925).Քարը քսել**

(Ինչ-որ բանի վերջ տալ,  
օրինակ՝ «Փողը քարն ա քսել»):

**174(926).Քարին, կապին ուն զնկնել:**

(Գործը դժվարության է  
հանդիպում, անլուծելի է  
ուանում):

**175(927).Քարից կակոյ ուտող<sup>3</sup>:**

**176(928).Ք... կերած շուն ա տառել:**  
(Իր արածի համար փոշմանել):

**177(929).Ք...ին մոխիր անել<sup>4</sup>:**

**178(930).Քարն ու ցերը իրա խառնվել:**  
(Խառնափնթորություն):

<sup>2</sup> Եթե որևէ մեկը միառժամանակ չի երևում, երկար ժամանակ չեն տեսնում, իջևանոն ասում են «քարն ա մտել», այսինքն՝ անհետացել է:(ծանոթ բանահավաքի):

<sup>3</sup> Ասվում է այն մարդու մասին, որն ուտելիքի հարցում թախմիդի չեւ ուտում է այն, ինչ կա, կամ ինչ տապահ են (ծանոթ բանահավաքի):

<sup>4</sup> Այսինքն՝ ինչ-որ բան բաքցնել, որ չխայտնաբերվի: Այս համեստառության հիմքում ընմած է կենդանական աշխաղի մի կարևոր սովորություն: Կասուն, շունը, վայրի գագանները իրենց արտարրուանքը հողով ծածկում են՝ հետքը բաքցնելու համար (ծանոթ է. խնձյանի):

<sup>1</sup> Փախը (փախիր) – պլոնծի ժանգը (ծանոթ բանահավաքի):

179(931). Քիսու լիզող իշխանցի<sup>1</sup>:  
(Այսինքն՝ ժլատ):

180(932). Քյափուրը թորանց թարթակին  
ընդունելու:  
(Այսինքն՝ անհավատ մարդոց  
ընկնի նրանց ազդեցության  
տակ):

181(933). Քյուսի անել (Քյուսի արած)<sup>2</sup>:

182(934). Քյուցուիք անել:  
(Իրար գլխի հավաքված կուչ  
գալ՝ տարածապու կամ իրար  
ապավինելու նպաստակով):

183(935). Քոռլուղ տալ:  
(Վնասել):

184(936). Օխտը ջարտանի<sup>3</sup> ա:  
(Ծառ ծածկամիտ, բազմադեմ  
մարդո):

185(937). Օցերը կծնեն:  
(Մինչև ինչ-որ բան լինի):  
(Ասվում է այն դեպքում, եթե ինչ-  
որ գործ ոժվարությամբ է  
լինում):

## ՕՐԴՆԱՆՔՆԵՐ ԵՎ ԲԱՐԵՍԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(938). Աշխարս խաղաղ ըլի.

Տուք էլ բախտավոր գավակնի  
ըլեք:  
Աչկերնուն ցամար մեծանան:

2(939). Աչկըտ լիս կենա:

3(940). Ապրես:

4(941). Ապրենս, քու նշանածի (ամուսնու)  
հետ սադ ըլես:

5(942). Ապրեք, կըօներնուտ կանաչ կենա:

6(943). Աստծու օխնանքը վե կյա, որբի  
ջան, ծեր վրա:

7(944). Աստծուց քե մհար մի հաջողու-  
թյուն ըլի:

8(945). Աստված նրան խելք տա, շնորք  
տա:

9(946). Աստու տոււը քեզ համար պաց  
ըլի:

10(947). Արևոտ ապրի:

11(948). Բախտավոր ըլես:

12(949). Բախտավոր ըլի:  
(Ասում են նորածին երեխային  
օրինելիս):

13(950). Բալա ջան, բաժակի հընգեր ըլեք,  
Սըրտանց հընգեր ըլեք:

14(951). Բարով, հազար բարի եք եկել,  
Կերած-խնաճներնիտ էլ անուշ ըլի:

15(952). Բարցը պարին ըլի:  
(Ասում են իիվանդին):

16(953). Զորանաս, զորտիկանաս,  
Սեցտեղիցըտ կեռտիկանաս<sup>4</sup>:

<sup>1</sup> Իշխանցին ձուկն ափսոսում է ուտել, իսկ քիսուը  
անպայման պես է լիզի:

<sup>2</sup> Իշխանի շրջանում այսպէս անլանում են այն  
մարդկանց, ովքեր պառակի ննան կուչ եկած,  
ուսուովկ փորձում են աննկատելի ինչ-որ մեկին  
հետևել կամ ինչ-որ բան անել:

<sup>3</sup> Այս արտահայտությունն ասվում է ամարո-  
յալան կամանց հասցեին: Դարձվածի ինասան  
այն է, որ կինը այնքան անքարու է, որ յոր բան ունի  
(դարտահայտ կամացի սեռական օրգանը) (ծանոթ  
բանասացի):

<sup>4</sup> Այս օրինանքը ասվել է Իշխանում: Այս օրինանքի  
ինասան այն է, որ մարդոց այնքան ապրի, զորանա,